ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԼԵՅԴԻ-ԶՈՆ» ՍՊԸ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) և «ԼԵՅԴԻ-ԶՈՆ» ՍՊԸ միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով ֆիթնեսի զարգացումը, ինչպես նաև ֆիթնեսի ոլորտում ուսանողների պրակտիկ կարողությունների առաջխաղացումը և կարիերայի ձևավորումը,

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը՝ պրակտիկ համատեղ հետազոտությունների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով Կողմերը համագործակցում են"

2.1.1 «ԼԵՅԴԻ-ԶՈՆ» ՍՊԸ–ում ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների և շրջանավարտների պրակտիկաների կազմակերպման աշխատանքներում:

2"1"2" ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների վերապատրաստումների և աշխատանքի տեղավորման գործում,

2"1"3" ՀՖԿՍՊԻ-ի կրթական ծրագրերի մշակման, նորարարական ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2"1"4" Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2"1"5" Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2"1"6" Լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթական ծրագրերի համատեղ իրականացման ոլորտում,

2"1"7" Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, հետազոտությունների և փորձաքննությունների իրականացման,

2"1"8" Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու, միջոցով:

2"2" Կողմերն իրականացնում են նաև՝

2"2"1" Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման աշխատանքներ,

2"2"2"Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն փոխանակում,

2"2"3" Գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում,

2"2"4" Միջազգային գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, խորհրդակցություններ:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության և համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հուշագիրի խզման դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր ավարտին հասցնելու համար:
4.6 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2025 թ. ապրիլի 10–ին :
4.7 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՀՖԿՍՊԻ	**«ԼԵՅԴԻ- ԶՈՆ» ՍՊԸ**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Լեդի–Զոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Դավթաշեն 4 թաղամաս 33/1, բն. 63
ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան	տնօրեն՝ Անդրանիկ Նավասարդյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.